№ 197 Նոյեմբերի 7 (19) 1880 Նոյեմբերի 7 (19) № 197

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐԻԿԱԶԸ ՄԵԾ Իշխան Փոխարքայի Թոյլտուութեամբ 1880 Թուականի նոյեմբերի 1-ից մուտքերին տալիս է հետեւեալ %:

1) Անժամանակ մուտքերին այսինքն մինչև պահանջելը. 4%
2) Մէկ, երկու և երեք տարով 4½%
3) Չորս և հինգ տարով 5%
4) Վեցից մինչև տասերկու տարով 5½%
5) Տասերկու տարուց աւելի 6%

Պրիկազը ընդունում է մուտքեր Ռուսաստանի բոլոր տեղերից, վարչական հիմնարկութիւններից, պաշտօնեաներից և մասնաւոր անձինքներից, վանքերից, եկեղեցիներից, քաղաքային և գիւղական հասարակութիւններից: Մուտքերը ընդունվում են նոյնպէս և փոստայով ուղարկված մի յայտարարութեան հետ հասարակ թղթի վրա: Անժամանակ մուտքերը մասնաւոր անձինքներից ընդունվում են 50 ր. ոչ պակաս, իսկ կառավարութենից 30 ր. ոչ պակաս իւրաքանչիւր անգամ: Ժամանակաւոր մուտքերը այլապէս չեն ընդունվում, եթէ ոչ գումարատիրոջ, կամ մուտքը յանձնողի անունով, իսկ անժամանակ մուտքերը կարող են լինել կամ անանուն, կամ մոցնողի անունով: Մուտքերը ցանկացողներին նոյն օրը կը վերադարձնվեն: Աւելի մանրամասն պայմանները մուտքերը ընդունելու և վերադարձնելու մասին յայտնված են 941 յօդ. XIII բաժնի հրատարակութիւն 1857 թ. և 1863 թ. կանոնադրութեան Կովկասեան Պրիկազի:

3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչի ենք առաջարկում:—Ներքին տեսութիւն: Նամակ Ալէքսանդրապոլից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Արեւելեան գործեր: Արեւելեան-Ռումելիա: Թիւրքաց հայաստանից:—«Մշակի» ձեռագիրներ:—Յայտարարութիւններ:

ԻՆՉԻ ԵՆՔ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ

Մենք մեր լրագրի էջերում շատ անգամ առաջարկած ենք Թիֆլիսի հայոց հասարակութեանը կազմել այս կամ այն ընկերութիւն, օրինակ Բագուի մարդասիրական ընկերութեան պէս մի ընկերութիւն, կամ հայոց քրիստոնէական միսիօնարական մի ընկերութիւն: Այս տեսակ յօդուածներից յետոյ մեր մի քանի բարեկամները շատ անգամ դիմել են մեզ հարցնելով արդեօք ինքներդ հաւատում էք, որ այդ տեսակ մի ընկերութիւն կարող է աջողվել հայերի մէջ...

Այս տեսակ հարցմունքներին մենք անկեղծ կերպով միշտ պատասխան ենք տուել, որ չենք հաւատում թէ մեր առաջարկութիւնը իրագործվի:

Ու ճշմարիտ հայը, մանաւանդ թիֆլիսեցին, անընդունակ է ընկերութիւններ կազմելու: Կազմվում են, այո՛, ընկերութիւններ մեզանում, բայց նրանց գոյութիւնը երկարատև չէ լինում: Հազար ու մի իրողութիւններ կարող ենք բերել մեր ասածը ապացուցանելու համար: Շատերը մեր հիմնված ընկերութիւններից մի քանի ամիս գոյութիւն ունենալուց յետոյ քանդվում են, շատերը շարունակում են գոյութիւն ունենալ, բայց ոչինչ գործ չեն կատարում և լոկ անունով միայն գոյութիւն ունեն:

Մի քանի տարի շարունակ մենք կրկնում էինք „Մշակի" մէջ, որ անհրաժեշտ է հիմնել Թիֆլիսում Բագուի մարդասիրական ընկերութեան պէս մի կենտրօնական հայոց ընկերութիւն, միայն աւելի լայն պրօգրամայով, քան թէ Բագուի ընկերութիւնը: Ու ահա այս տարի ուրախութեամբ լսեցինք որ մի երկու անձինք վերջապէս վճռեցին ինիցիատիվ տալ այդ տեսակ մի ընկերութեան հիմնադրութեան: Բայց վերջն ինչ եղաւ... Երկու, երեք անգամ հաւաքվեցին, մշակեցին մի լայն, ընդարձակ ծրագիր, վճռեցին ներկայացնել կառավարութեան հաստատութեանը, բայց ոչինչ չարեցին և ծրագիրը պարոններից մինի տանը, ահա արդէն վեց ամիս է, որ խոր քնով քնած է....

Արդեօք կը զարթնի նա իր խոր քնից, չը գիտենք: Գիտենք միայն թէ մեզ համար այդ տեսակ ընկերութիւն անհրաժեշտ է և թէ Թիֆլիսի համար ամօթ է չունենալ մի ընկերութիւն, որ ունի մինչև անգամ Բագուի պէս մի գաւառական քաղաք:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

25 հոկտեմբերի

„Մեղուի" 79 համարում տպված առաջնորդող և „Բաց նամակ" պ. Գ. Արծրունու՝ „Մշակի" խմբագրին յօդվածներից պարզ երևում է, որ ազգաշէն խմբագիրը կորցրել է իր առողջ դատողութիւնը և խեղդվող մարդու նման ձեռքը փրփուրի է գցում, որպէս զի կարողանայ ազատել իր անձը լուսաւորութեան և ճշմարտութեան ալիքներից: Երբ „Մշակը" պարզ և հասկանալի փաստերով ապացուցանում էր „Մեղուի" սխալ և ծուռ գաղափարները ազգային հարցերի վերաբերութեամբ, երբ մաքուր հայելու պէս դնում էր նրա առջև՝ թէ ազգի գոյութիւնը և յառաջադիմութիւնը կախված է մայրենի լեզուից և հայրենիքից,—„Մեղուն" ոտնակոխ անելով մինչև անգամ իր ներքին համոզմունքը, սկսեց գրգռել խաւար ամբոխի մոլեռանդութիւնը իր անմիտ և տղայական գաղափարներով, թէ „Մշակը" կրօնափոխութիւն է քարոզում, մինչդեռ ինքը շատ լաւ էր հասկանում, որ „Մշակը" ոչ թէ կրօնափոխութիւն, այլ ազգային միութիւն էր քարոզում, ամփոփելով զանազան դաւանութեան պատկանող հայ տարրը մի դրօշակի տակ, այն է ազգութեան: Այո՛, „Մեղուն" այդ անում էր նրա համար, որ նա Գ. Արծրունու անհաշտ թշնամին է, հետևաբար և „Մշակի", որովհետև պ. Արծրունին „Մշակի" խմբագիրն է...

Երբ ազգային և կրօնական միաձայնութիւնները մեր երկու պարբերական հրատարակութիւնների մէջ ծայրայեղ աստիճանի հասան, երբ „Մշակի" քարոզած գաղափարները սկսեցին արձագանք գտնել ամեն մի բանիմաց անձանց սրտերում և արդէն քիչ էր մնացել „Մեղուի" խմբագրին գլորվել խայտառակութեան անդունդը՝ իր հետ տանելով և իր նման մոլեռանդ և տգէտ քարոզիչներին, յանկարծ օգնութեան հասաւ նրա աշխատակից բազմագէտ պ. Խնկոսը իր երկպառակութեան սերմերով—յայտնելով այն միտքը թէ՝ թող ամբողջ ազգութիւնը բաժանվի երկու կուսակցութեան և նրանց բոլոր անդամները ուղարկեն իրանց ստորագրութիւնները „Մշակին" կամ „Մեղուին" ով ում քարոզած մտքերին համակրում է... որքան անքաղաքականութիւն և որպիսի անմիտ առաջարկութիւն... Ի հարկէ ամբոխը պ. Խնկոսի կարծեաց չափ տգէտ չէ, որ այդ առաջարկութիւնը ընդունէր, բացի Վաղարշապատցի Ղազար Տէր-Ղազարեանցից և Թիֆլիսեցի Սարգիս Ղազարեան Նազարեանցից, որ իրանց բաժանորդագինը յետ պահանջեցին „Մշակից": Չը նայելով որ շատ ցանկացողներ կան „Մեղուից" յետ պահանջել իրանց բաժանորդագինը, այնուամենայնիւ այդ չեն անում, այլ մի քանիսները միայն առանձին նամակներով յայտնեցին իրանց կարծիքը և համակրութիւնը թէ „Մշակին„ և թէ „Մեղուին":—Գ. Սիմէօնեանցը տեսնելով որ այդ միջոցով էլ անկարող եղաւ դիմադրել „Մշակի" արդարացի պահանջներին և նրա քարոզած ազգայնութեան գաղափարին, որովհետև ամեն մի ազգային գաղափարը ըմբռնող մարդ յայտնեց իր մեղադրական խօսքը „Մեղուի" պատուելի խմբագրին „Մշակի" միջոցաւ,—ինքն պ. Սիմէօնեանցը այնքան յանդուգն հանդիսացաւ, որ հրապարակաւ յայտնեց թէ՝ „Մշակի" բոլոր թղթակցութիւնները կեղծ են և շինվում են իսկ „Մշակի" խմբագրատան մէջ, վասն զի եթէ նրանք կեղծ չեն, թող պ. Արծրունին յայտնէ նրանց հեղինակների ազգանունները: Շատ հաւանական է, որ պ. Արծրունին այդ թշուառականի անտեղի պահանջը չէր կատարի, ինչպէս որ չը կատարեց էլ, եթէ այդ չը կամենային իրանք թղթակիցները. բայց այս վերջիններից շատերը՝ մինչև անգամ յանձն առնելով կրել զանազան տեսակ հալածանքներ հասարակական խաւար և մոլեռանդ շրջաններից, միայն արդարութիւնը պաշտպանելու համար, աշխատեցին յագեցնել այդ խղճալու ծարաւը, հարց առաջարկելով իրանց, թէ տեսնենք էլ ի՞նչ է պահանջելու մեզանից այդ պարոնը իրան ուղիղ և արդար հանդիսացնելու համար:—Ու ահա „Մեղուի" 79 համարում լոյս են տեսնում երկու յօդվածներ, որոնցից մէկը պարզ ցոյց է տալիս, թէ որպիսի ստոր և անազնիւ միջոցների է ձեռք գցել պ. խմբագիրը, զանազան անամօթ յիշոցներ թափելով „Մշակի" թղթակիցների գլխին, (վերադարձնում ենք պ. Սիմէօնեանցին „Մշակի" թղթակիցներին տուած կինտօ ածականը.) իսկ միւսը իր վերնագրովը նոյնպէս պարզում է մեզ թէ՝ որքան բարձրացած է եղել պ. խմբագրի կոչքի